



Ժողովրդավարական Հաստատությունների և Մարդու Իրավունքների Գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ

6 Դեկտեմբերի 2015 թ.

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ հանրաքվեի փորձագիտական խմբի
վերջնական զեկույց



Վարչակա

Փետրվարի 5 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ	2
II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ.....	4
III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	5
IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....	7
Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ	7
Բ. ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ (ԸՆՏՐԱԿԱՆ) ՀԱՄԱԿԱՐԳ	8
Գ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ.....	9
V. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	11
Ա. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ	11
Բ. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ.....	13
Գ. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՕՐ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ.....	15
VI. ՔԱՐՈԶԱՐՇԱՎ, ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.....	17
Ա. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	17
Բ. ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....	19
Գ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ.....	20
VII. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.....	24
Ա. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.....	24
Բ. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.....	25
VIII. ՀԱՎԵԼՎԱԾ. ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	27
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՍԻՆ.....	28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ

6 Դեկտեմբերի 2015 թ.

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ հանրաքվեի փորձագիտական խմբի

վերջնական զեկույց¹

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության հրավերի հիման վրա, 2015թ. նոյեմբերի 26-ին Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) տեղակայել է Հանրաքվեի փորձագիտական խումբ (ՀՓԽ) Սահմանադրական հանրաքվեն դիտարկելու նպատակով: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի ուշադրության կենտրոնում են գտնվել իրավական դաշտը, հանրաքվեի կառավարումը, քարոզարշավը և լրատվամիջոցները: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ չի գնահատել սահմանադրական փոփոխությունների բովանդակությունը կամ հանրաքվեի օրը համակարգված ձևով չի դիտարկել հանրաքվեի ընթացքը:

Դեկտեմբեր 6-ի հանրաքվեն տեղի է ունեցել հոկտեմբերի 8 - ին հրատարակված նախագահական հրամանագրի հիման վրա, որին նախորդել է փոփոխությունների նախագծի հավանությունը՝ Ազգային Ժողովի պատգամավորների ճնշող մեծամասնության կողմից: Բարեփոխումները կոչված էին փոփոխություններ կատարել գործող Սահմանադրության բոլոր հոդվածներում՝ բացառությամբ երկու հոդվածների:

Իրավական դաշտը, ընդհանուր առմամբ, ապահովում է ամուր հիմք հանրաքվեի անցկացման համար, թեև Հանրաքվեի մասին օրենքը կարիք ունի ժողովրդավարական ընտրական գործընթացների միջազգային չափանիշների հետ հետագա համապատասխանեցման: Հանրաքվեի կազմակերպումը արտացոլում է հանրաքվեին նախորդող երեք տարիների ընթացքում ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից արված ընտրական գործընթացի նկատմամբ հասարակության վստահությունը բարելավելու հանձնարարականների, այդ թվում՝ ընտրողների ցուցակների ճշգրտման բարելավման, քարոզարշավի ընթացքում հանրային միջոցների չարաշահման կանխարգելման ու քվեարկության օրը ընտրախախտումների վերաբերյալ երաշխիքների ամրապնդման, ինչպես նաև բողոքի մեխանիզմների և ընտրական իրավունքի խախտումների հաշվետվողականության արդյունավետությունը կյանքի կոչելու որևէ նշանակալից գործողությունների բացակայությամբ:

Հանրաքվեն անց է կացվել եռաստիճան վարչարարությամբ, որը ղեկավարվում էր ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից: Չնայած թափանցիկ և արհեստավարժ ձևով աշխատելու փորձերին, հանրաքվեի վարչարարությունը տուժել է շահագրգիռ կողմերի վստահության բացակայությունից և այն համատարած կարծիքից, որ

¹ Միակ պաշտոնական փաստաթուղթը հանդիսանում է սույն զեկույցի անգլերեն լեզվով տարբերակը:

ավելի ցածր աստիճանի հանձնաժողովները անկարող են եղել անաչառ կերպով կատարել իրենց պարտականությունները:

Ընտրողների վերջնական ցուցակներում ընդգրկված են 2,566,998 ընտրողներ: Ոստիկանությունը ջանքեր է գործադրել փարատել ընտրացուցակների նկատմամբ համընդհանուր անվստահությունը, սակայն տարբեր շահագրգիռ կողմերը մասնանշել են ընտրողների ցուցակների ճշգրտությանը առնչվող վաղեմի, չլուծված խնդիրները, այդ թվում՝ անհարկի բարձր թվով գրանցումներ որոշ հասցեներում և մահացած մարդկանց առկայությունը ընտրողների ցուցակներում: Մասնավորապես, մտահոգություն է առաջացնում հնարավոր շահարկման այն փաստը, որ ընտրողների ցուցակներում ընդգրկված են արտերկրում ապրող բազմաթիվ մարդկանց անուններ, ովքեր իրավասու են քվեարկել միայն այն դեպքում, եթե ֆիզիկապես գտնվեն երկրում:

Միավորումների, խոսքի, հավաքների և տեղաշարժման հիմնարար ազատությունները քարոզարշավի ընթացքում հիմնականում պահպանվել են: Քարոզարշավը խիստ բևեռացված էր և կենտրոնացած էր առաջարկվող նոր սահմանադրության մի քանի հարցերի շուրջ, մինչև սահմանադրական բարեփոխումների կողմնակիցները շեշտում էին քաղաքական համակարգը փոխելու առավելությունները, դրա հակառակորդները պնդում էին, որ փոփոխությունները նախատեսված են սատարել գործող նախագահին և իշխող կուսակցությանը՝ պահպանել իրենց իշխանությունը: Պետական պաշտոնյաների կողմից քարոզչություն կատարելու վերջերս ընդունված իրավական սահմանափակումների վերացումից հետո, պետական պաշտոնյաները գլխավորում էին «Այո» քարոզարշավը, և իշխանությունները կենտրոնացել էին հսկայական հանրային միջոցներ՝ սահմանադրական փոփոխությունների օգտին քարոզելու համար:

Քարոզչություն իրականացող ցանկացած անհատ կամ խումբ իրավասու է ստեղծել հանրաքվեի քարոզչության հիմնադրամ՝ ֆինանսավորելու իր քարոզչական գործունեությունը: Հանրաքվեի մասին օրենքը սահմանում է որոշակի սահմանափակումներ՝ հանրաքվեի հիմնադրամներ մուծումների մասով և պահանջում ԿՀՀ-ին է ներկայացնել քարոզարշավի ֆինանսավորման մասին տվյալներ, սակայն միաժամանակ չի պահանջում այդ հայտարարագրերը կամ ԿՀՀ-ի աուդիտի արդյունքները հրապարակել: ԿՀՀ-ն, իր սեփական նախաձեռնությամբ, իր կայքում հրապարակում է հանրաքվեի հիմնադրամների եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկանքները:

Լրատվական միջավայրը ընկալվում է որպես քաղաքականացված: Մեծ թվով լրատվամիջոցներ գործում են սահմանափակ գովազդային շուկայում, և հեռուստատեսությունը շարունակում է մնալ հիմնական տեղեկատվության աղբյուր: Լրագրողների գործունեության անվտանգությունը և ապահովությունը շարունակում է մնալ լուրջ մտահոգության առարկա: Զանգվածային լրատվամիջոցների մասով՝ քարոզչության կանոնակարգումները սահմանվում են Հանրաքվեի մասին օրենքում և Ընտրական օրենսգրքում, սակայն դրանք հստակ չեն: Գրեթե բոլոր խորհրդարանական խմբակցությունները օգտվեցին անվճար եթերաժամ ստանալու հնարավորությունից: Վճարովի գովազդի եթերաժամը հասանելի էր միայն խորհրդարանական խմբակցություններին, և հիմնականում ձեռք էր բերվել «Այո» քարոզչության կողմակիցների կողմից:

Ընտրական բողոքների և գանգատների իրավական շրջանակները բավականաչափ մանրամասնված են, և այդ համակարգը բնութագրվում է ձևակերպված ընթացակարգերի կողմից: Սակայն, Սահմանադրությունը միայն Նախագահին և առնվազն թվով մեկ հինգերորդ պատգամավորներին է ընձեռում իրավունք բողոքարկելու հանրաքվեի արդյունքները: Դիմումներ ներկայացնելու նման սահմանափակ իրավական կարգավիճակը կասկածի տակ է դնում հանրաքվեի շահագրգիռ կողմերի դատական պաշտպանության առկայությունը: Վեճերի լուծման արժանահավատությունը խաթարվել էր հանրաքվեի վարչարարության և դատարանների նկատմամբ վստահության պակասի պատճառով:

Իրավական դաշտը ապահովում է միջազգային և տեղական դիտարկման հնարավորություն և իրավունք է տալիս կուսակցության վստահված անձանց ներկա լինել բոլոր ընտրատեղամասերում: Չնայած օրենքում բացակայում է համապատասխան պահանջը, ԿԸՀ-ն պարտավորեցնում է տեղական դիտորդներին հավատարմագրվելու համար անցնել որակավորման քննություն:

Ընտրատեղամասերում, որտեղ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ն դիտարկել է ձայների հաշվարկի ընթացքը, լուրջ խնդիրների թվում են՝ «Այո» քարոզարշավի վստահված անձանց կողմից միջամտություն և ահաբեկում, որոնք հանգեցրել են փաստացի քվեարկության արդյունքների փոփոխմանը: Տեղական դիտորդները, ընդդիմադիր խմբերը և լրատվամիջոցները բարձրաձայնում էին մեղադրանքներ համատարած խախտումների, միջամտության և ահաբեկումների վերաբերյալ քվեարկության և հաշվարկի գործընթացի ընթացքում երկրի ամբողջ տարածքում: Իշխանությունները խոստացել էին, որ բոլոր նման հայտարարությունները քննության կառնվեն ԿԸՀ-ի և իրավապահ մարմինների կողմից, բայց, միաժամանակ, ժխտում էին, որ խախտումները համակարգված էին և ենթադրում էին, որ առաջատար քաղաքացիական հասարակական խմբերը կողմնակալ են, քանի որ հայտնի էր, որ նրանք դեմ էին հանրաքվեին:

ԿԸՀ-ն մերժել է մի ընդդիմադիր կուսակցության կողմից ներկայացված մանրամասն բողոքը, որը պահանջում էր անվավեր ճանաչել հանրաքվեի արդյունքները, քանի որ իրավական և ընթացակարգային խախտումները համակարգված էին և համատարած: Հանրաքվեի արդյունքների վերաբերյալ նույն հիմնավորմամբ Սահմանադրական դատարան ներկայացնելու հաջորդ դիմումը անվավեր ճանաչելու պահանջով աջակցություն չի ստացել խորհրդարանի անդամների պահանջվող մեկ հինգերորդի կողմից:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության հրավերի հիման վրա, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու զրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 13-ը տեղակայել է Հանրաքվեի փորձագիտական խումբ (ՀՓԽ)՝ 2015թ. դեկտեմբերի 6-ի Սահմանադրական հանրաքվեն դիտարկելու նպատակով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՀՓԽ-ն կազմված էր ԵԱՀԿ-ի չորս մասնակից երկրների չորս փորձագետներից: ԵԱՀԿ /

ԺՀՄԻԳ-ն նախկինում դիտարկել է ինը ընտրություններ Հայաստանում, այդ թվում վերջին 2012 թ. խորհրդարանական և 2013-ի նախագահական ընտրությունները:²

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ն հիմնականում ուշադրություն է դարձրել իրավական դաշտին, հանրաքվեի վարչարարությանը, քարոզարշավին և լրատվամիջոցներին առնչվող հարցերին: Համահունչ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ մեթոդաբանությանը՝ ՀՓԽ-ն չի գնահատել առաջարկվող սահմանադրական փոփոխությունների բովանդակությունը և Հանրաքվեի օրը համակարգված ձևով չի դիտարկել հանրաքվեի ընթացքը: Հետևաբար, սույն զեկույցը սահմանափակված է շրջանակներով և չի ներկայացնում հանրաքվեի գործընթացի վերաբերյալ ընդհանուր գնահատական: Վերահսկվող ոլորտները գնահատվել են ԵԱՀԿ-ի հանձնառությունների և այլ միջազգային պարտավորությունների և չափանիշների, ինչպես նաև ազգային օրենսդրության համապատասխան: Այս վերջնական զեկույցը պետք է ընթերցել Հայաստանում ընտրական գործընթացների վերաբերյալ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի նախորդ զեկույցների հետ համատեղ:

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը հանրաքվեն դիտարկելու հրավերի համար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ)՝ համագործակցության և հավատարմագրման փաստաթղթերը տրամադրելու համար, ինչպես նաև Արտաքին գործերի նախարարությանը և այլ պետական հաստատություններին և Մարդու իրավունքների պաշտպանին՝ համագործակցության համար: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ը ՀՓԽ-ն ցանկանում է նաև իր երախտիքը հայտնել քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ իրենց տեսակետները խմբի հետ կիսելու համար: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ը ՀՓԽ-ն ցանկանում է արտահայտել իր շնորհակալությունն ԵԱՀԿ երևանյան գրասենյակին և այլ միջազգային կազմակերպություններին և դիվանագիտական ներկայացուցչություններին համագործակցության համար:

III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը ունի կիսանախագահական համակարգ՝ ուղղակիորեն ընտրված նախագահ, ում իրավասությունները սահմանափակվում է երկու հնգամյա ժամկետով և միապալատ խորհրդարան՝ 131 պատգամավորներով: Պարոն Սերժ Սարգսյանը, ով ներկայացնում է Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), 2013թ. փետրվարին երկրորդ անգամ հնգամյա ժամկետով վերընտրվեց նախագահ: Վերջին՝ 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ, իշխող ՀՀԿ-ն ստացել է 69 մանդատ: Մնացած ընտրված մասնակիցները ներկայացնում են Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (ԲՀԿ, 37 մանդատ), Օրինաց երկիր կուսակցությունը (ՕԵԿ, 6 մանդատ), Հայկական յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ, 6 մանդատ), Ժառանգություն կուսակցությունը (5 մանդատ) և Հայկական Ազգային կոնգրեսը (ՀԱԿ, 7 մանդատ): Պաշտոնապես, ՀՀԿ-ն կռալիցիայի մեջ է ՕԵԿ-ի հետ, իսկ մնացած կուսակցությունները ձևավորել են ընդդիմադիր խմբակցություններ:

² Տես՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի բոլոր նախորդ զեկույցները

Սահմանադրական բարեփոխումների նախապատմությունը սկսվել է 2013 թ. Նախագահի աշխատակազմին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտացված հանձնաժողովի ստեղծմամբ, որի կազմում ընդգրկված էին փորձագետներ, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի նախագահը: Հանձնաժողովը ներկայացրել է հայեցակարգային նախագիծ և, այնուհետև, փոփոխությունների նախագիծ, ըստ որի՝ փոփոխության ենթակա են գործող Սահմանադրության բոլոր հոդվածները՝ բացառությամբ երկու հոդվածների: Նախագիծը նախատեսում է անցում լիարժեք խորհրդարանական հանրապետության՝ համամասնական ընտրակարգով ընտրված խորհրդարանով և նախատեսում է հատուկ դրույթներ՝ խորհրդարանում «կայուն մեծամասնություն» ապահովելու համար, և նախագահը, որին վերապահվում է բավականին սահմանափակ լիազորություններ, անուղղակիորեն է ընտրվելու է 2018 թ-ին, երբ գործող նախագահի երկրորդ ժամկետը կավարտվի:

Հայեցակարգի նախագիծը և փոփոխությունների նախագիծը վերանայվել է Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարություն՝ Իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) կողմից, ում կարծիքները հիմնականում դրական էին: ³ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԿ-ի որոշ գրուցակիցներ պնդում են, որ ՀՀ նախագահի վարչակազմը և իշխող կուսակցությունը խորհրդարանի միջոցով հապշտապ անցկացրել են փոփոխությունները և ապա դրանք հապշտապ ներկայացրել են ընտրողներին՝ սահմանափակելով ընտրողների հնարավորությունը կատարել տեղեկացված ընտրություն: Մյուս կողմից, փոփոխությունների կողմնակիցները ընդգծել են, որ Հայաստանում սահմանադրական բարեփոխումները մշտապես եղել են օրակարգում 1990-ականներից սկսած, և, որ առաջարկվող փոփոխությունների ակտիվ քննարկումը մեկնարկել է ավելի քան երկու տարի առաջ, և, որ շահագրգիռ ընտրողները ունեցել են բավարար ժամանակ ծանոթանալու դրանց հետ ընտրություն կատարելուց առաջ:

ԲՀ կուսակցության նախագահ պարոն Գագիկ Ծառուկյանը, ում գլխավորած կուսակցությունը ամենամեծ ընդդիմադիր կուսակցությունն է խորհրդարանում, 2014 թ. դեմ արտահայտվեց Նախագահի կողմից նախաձեռնած սահմանադրական բարեփոխումների գործընթացին: Սակայն, 2015 թ փետրվարին, պարոն Ծառուկյանը հայտարարել է, որ ինքը դուրս է գալիս քաղաքականությունից և զբաղվելու է գործարարությամբ: Չնայած, ԲՀ-ի խմբակցության նոր ղեկավարը ներկայացնում է սա որպես զուտ անձնական ընտրություն, ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԿ-ի գրուցակիցներն այս որոշումը վերագրում են քաղաքական ճնշմանը և հարկային օրինախախտման գործեր հարուցելու սպառնալիքին ընդդեմ պարոն Ծառուկյանի բիզնեսների: Հանրաքվեի թափավազքի ընթացքում, թե ԲՀ-ն և ՀՅԴ-ն աջակցել են առաջարկվող սահմանադրական փոփոխություններին և սահմանափակում են իրենց ընդդիմադիր գործունեությունը: Նրանք բացատրեցին, որ կողմ են Հայաստանում խորհրդարանական համակարգին, և, որ իրենց ներդրումով օգնել են ձևավորել խորհրդարանի կողմից հոկտեմբերի 5-ին ընդունված փոփոխությունների վերջնական փաթեթը:

³ [Stu` the Venice Commission's opinions on the Draft Amendments to the Constitution of the Republic of Armenia.](#)

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Հանրաքվեների անցկացման կարգը հիմնականում կարգավորվում է 1995 թվ. Սահմանադրությամբ (վերջին փոփոխությունը 2005 թ.), 1991 թվ. Հանրաքվեի մասին օրենքով (այսուհետ՝ Հանրաքվեի մասին օրենք) և 2011 թվ. Ընտրական օրենսգրքով: Մնացած համապատասխան օրենսդրությունը ներառում է՝ Հավաքների ազատության մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը և Քրեական օրենսգիրքը: Իրավական դաշտը, ընդհանուր առմամբ, ապահովում է ամուր հիմք հանրաքվեների անցկացման համար:

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի մինչ այդ արված հանձնարարականները բազմիցս կարևորել են հետագա միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը՝ բարելավելու հասարակության վստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ, այդ թվում, բարելավել ընտրողների ցուցակների ճշգրտությունը, կանխարգելել հանրային միջոցների չարաշահումը քարոզարշավի ժամանակ, ուժեղացնել երաշխիքները քվեարկության օրը ընտրախախտումների կանխարգելման համար, ինչպես նաև բարձրացնել բողոքի մեխանիզմները և ընտրախախտումների նկատմամբ պատասխանատվությունը: Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին, որ նախորդ հանձնարարականների քննարկումը և ընտրական օրենսդրության բարեփոխումները սառեցվել են մինչև սահմանադրական փոփոխությունների ընդունումը:

Հանրաքվեի մասին օրենքը գրեթե ամբողջովին փոխվել է 2015 թ հուլիսին՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնել այն Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի հետ: Վերջին փոփոխությունները *inter alia* փոխել են հանրաքվեի հանձնաժողովների լիազորությունները՝ ներառել են ավելի մանրամասն կանոններ քարոզչության, լրատվամիջոցների մատչելիության և քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ. թարմացվել են քվեարկության, քվեները հաշվարկելու, հանրաքվեի արդյունքների հաստատման ընթացակարգերը, ինչպես նաև բողոքների և բողոքարկման ընթացակարգերը: Անմիջապես քվեարկությունից առաջ Հանրաքվեի մասին օրենքի հիմնական դրույթների փոփոխությունը, այնուամենայնիվ, չի համարվում բարենպաստ գործունեություն:⁴ Չնայած Հանրաքվեի մասին օրենքը հաճախ հղում է կատարում Ընտրական օրենսգիրքը, նրանք լիովին ներդաշնակեցված չեն:⁵

Ընտրական օրենսգիրքը փոփոխվել է 2015թ. նոյեմբերին՝ թույլատրելով ընտրողների նույնականացումը ընտրատեղամասերում ըստ կենսաչափական նույնականացման քարտերի, որոնք վերջերս լայնամասշտաբորեն ներդրվել են: Այս փոփոխությունը

⁴ Վենետիկի հանձնաժողովի 2007 թ. Հանրաքվեի հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի Բաժին II.2.բ նախատեսում է, « Հանրաքվեի մասին օրենքի հիմնարար դրույթները չպետք է ենթարկվեն փոփոխության, եթե մինչև հանրաքվեի մնում է մեկ տարուց քիչ ժամանակ»:

⁵ Օրինակ, պարզ չէ, թե հանրաքվեի քարոզչության ընթացքում Ընտրական օրենսգրքի որ դրույթներն են կիրառվում են հեռարձակողների պարտավորությունները որոշելիս (տես՝ Լրատվամիջոցներ): Հանրաքվեի մասին օրենքը չի պարունակում դրույթներ, որոնք պահանջում են հրապարակել Ընտրական օրենսգրքում տեղ գտած նախընտրական հիմնադրամների հայտարարագրերը (տես՝ Քարոզարշավի ֆինանսավորման):

առաջացրեց հակասություններ, և ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ի որոշ գրուցակիցները մտահոգություն հայտնեցին, որ այն հնարավորություն է ստեղծում ընտրական հակաօրինական գործողությունների համար, քանի որ բացակայում են համարժեք երաշխիքներ բազմակի քվեարկության դեմ:⁶

Ընտրական օրենսդրության փոփոխությունները պետք է իրականացվեն ներառական կերպով, և բոլոր շահագրգիռ կողմերը պետք է խրախուսվեն գործադրել բոլոր հնարավոր ողջամիտ ջանքերը՝ գալու հնարավորինս ամբողջական փոփոխամաձայնության բարեփոխումների վերաբերյալ, հաշվի առնելով ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի բոլոր նախորդ համապատասխան հանձնարարականները: Հանրաքվեների կանոնակարգումները պետք է համապատասխանեցվեն ժողովրդավարական ընտրական գործընթացների միջազգային չափանիշներին և պետք է հաշվի առնվեն Ընտրական օրենսգրքում:

Բ. ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ (ԸՆՏՐԱԿԱՆ) ՀԱՄԱԿԱՐԳ

Ըստ Հանրաքվեի մասին օրենքի, հանրաքվեներն անց են կացվում հիմնված համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Բոլոր 18 տարին լրացրած քաղաքացիները ունեն քվեարկելու իրավունք, բացառությամբ նրանց, ովքեր գտնվում են ազատազրկման մեջ կամ դատարանի վճիռով՝ ճանաչվել են անգործունակ: Բոլոր ազատազրկվածներին ընտրական իրավունքից զրկումը՝ անկախ գործած հանցանքի ծանրությունից, չի համապատասխանում ԵԱՀԿ հանձնարարականներին և միջազգային այլ պարտավորություններին ու չափանիշներին:⁷ Մտավոր թերություն ունեցող անձանց քվեարկության իրավունքից զրկելը հակասում է Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:⁸ Օրենքը նախատեսում է միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինձառայողները, ինչպես նաև ձերբակալված ու կալանավորված անձինք կարողանան իրականացնել քվեարկելու իրենց իրավունքը:

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն կարող է նախաձեռնվել է ՀՀ Նախագահի կամ խորհրդարանի կողմից: Սույն հանրաքվեն նախաձեռնվել է ՀՀ-ի Նախագահի հոկտեմբերի 8-ի հրամանագրով, երբ հոկտեմբերի 5-ին խորհրդարանը սվել է փոփոխությունների վերաբերյալ իր համաձայնությունը: Հանրաքվեին ներկայացված

⁶ Մինչ այս փոփոխությունները, ընտրողները կարող էին նույնականացվել ընտրատեղամասերում ըստ անձնագրերի, ինչպես նաև զինձառայողների համար՝ ըստ զինվորական գրքույկների և հավաստագրերի: Որպես երաշխիք բազմակի քվեարկության դեմ, այդ փաստաթղթերը պետք է լինեին դրոշմակնքված՝ նախանշելու, որ դրանց կրողները արդեն քվեարկել են, բայց կենսաչափական նույնականացման քարտերը կնքել հնարավոր չէ:

⁷ 1990 թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.3 պարբերությունը նախատեսում է, որ մասնակից պետությունները պետք է «չափահաս քաղաքացիներին երաշխավորեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունք», իսկ 24-րդ կետում նախատեսված է, որ իրավունքների եւ ազատությունների ցանկացած սահմանափակում պետք է «խստիվ համապատասխանի այդ օրենքի նախանշմանը»: Տես նաև՝ Եվրոպական դատարանի Մարդու իրավունքների (ՄԻԵԴ) Հիքստ ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 2) գործի և այլ գործերի վճիռները:

⁸ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ Հոդվածը նախատեսում է, որ «Մասնակից պետությունները երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և մյուսների հետ հավասար հիմունքներով դրանցից օգտվելու հնարավորությունը»:

սահմանադրական փոփոխությունները ընդունվում են, եթե դրանք ստանում են քվեարկած ձայների ավելի քան 50 տոկոսը, բայց ոչ պակաս, քան գրանցված ընտրողների թվի մեկ քառորդի կողմից:

Գ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Ընտրական բողոքների և դիմումների իրավական շրջանակները բավականաչափ մանրամասված են, և այդ համակարգը բնութագրվում է պաշտոնականացված ընթացակարգերի կողմից: Ի լրումն Հանրաքվեի մասին օրենքի և Ընտրական օրենսգրքի, բողոքները և դիմումները կարգավորվում են Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքով և Վարչական դատավարության մասին օրենսգրքով: Այս համակարգը, ընդհանուր առմամբ, նախկինում մեկնաբանվել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից՝ անտեղի բարդության համար, և դրա արդյունավետությունը մտահոգության առարկա է:

Հանրաքվեի հանձնաժողովների որոշումներին և գործողություններին (կամ անգործությանը) առնչվող դիմումները բողոքարկվում են ավելի բարձր մակարդակի հանձնաժողովներում: Այս բողոքները կարող են ներկայացվել դիտորդների և վստահված անձանց կողմից՝ նրանց իրավունքների խախտման դեպքում, հանձնաժողովի անդամների կողմից, ինչպես իրենց, այնպես էլ ցանկացած այլ անձի իրավունքների խախտման դեպքում և ցանկացած այլ անձի կողմից, ում անհատական ընտրական իրավունքները խախտվել են: Բողոքները ներկայացնելու այս իրավական կանոնները նախապես քննադատվել են ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից որպես չափից դուրս սահմանափակ և, որ այն չի ապահովում արդյունավետ իրավական պաշտպանություն օրենքի խախտումների դեպքում:⁹ Սույն հանրաքվեի ընթացքում, օրինակ, առանձին դիտորդների բողոքները քվեարկության օրը տեղի ունեցած խախտումների վերաբերյալ ընդունվել էին, սակայն չէին ընդունվել նրանց այնտեղ տեղակայած և հավատարմագրած ՀԿ-ի բողոքները: Եթե նման բողոքները ներկայացվում էին իրավաբանների կողմից՝ առանձին դիտորդների անունից, ապա ԿԸՀ-ն պահանջում էր պատշաճ կերպով վավերացրած լիազորագրեր ի հաստատումն, որ այդ փաստաբանները ներկայացնում են դիտորդներին:

ԿԸՀ-ի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են Վարչական դատարանում: Վարչական դատավարության մասին օրենսգիրքը նաև թույլ է տալիս բողոքարկել բոլոր վարչական մարմինների, այդ թվում, Հանրաքվեի ավելի ցածր աստիճանի հանձնաժողովների որոշումները անմիջականորեն Վարչական դատարան: Սա, թեև ստեղծում է տեսական հնարավորություն, որ նույն բողոքը կարող է միաժամանակ ներկայացվել ավելի բարձր մակարդակի ընտրական հանձնաժողով և Վարչական դատարան, ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ի զրուցակիցները չեն արտահայտել որևէ մտահոգություն հնարավոր իրար հակասող որոշումների վերաբերյալ, ի շնորհիվ այդ մարմինների միջև եղած արդյունավետ հաղորդակցության:

Բողոքներ ներկայացնելու և հանրաքվեի հանձնաժողովների կողմից դրանց քննարկման ժամկետները (համապատասխանաբար երկու և հինգ օր) մինչև քվեարկության օրը

⁹ Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի 99-րդ բաժինը նախատեսում է. «[Ընտրական] բողոքների հետաքննությունը պետք է հնարավորինս երաշխավորվի: Ընտրատարածք, յուրաքանչյուր ընտրողի համար պետք է մատչելի լինի ... բողոք ներկայացնել»:

բավարար են, և ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի գրուցակիցները այդ առումով որևէ մտահոգություն չեն արտահայտել:

Քվեարկության օրը Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների (ՏՀՀ) որոշումների վերաբերյալ բողոքները, ինչպես նաև տեղամասի արդյունքները անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները կարող են ներկայացվել Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովներին (ԸՀՀ) քվեարկությանը հաջորդող օրը՝ միայն ժամը 12.00-ից 18.00 միջև ընկած ժամանակահատվածում: Այս վերջնաժամկետը ակնհայտորեն չափից դուրս սահմանափակող է, հաշվի առնելով, որ քվեաթերթիկների հաշվարկը բազմաթիվ ընտրատեղամասերում տևում է մինչև վաղ առավոտ, և բողոքատուները բավարար ժամանակ չեն ունենում պատճառաբանված և հիմնավորված բողոքները պատշաճ կերպով պատրաստելու համար: Քաղաքացիական դիտորդական մի կազմակերպություն դեկտեմբերի 7-ին մինչև վերջնաժամկետի ավարտը ԸՀՀ-ներ և ԿՀՀ է ներկայացրել 40 դիմում-բողոքներ, ինչպես նաև հաջորդ օրը ներկայացրել է մի շարք դիմում-բողոքներ: ԿՀՀ-ն ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին ներկայացրել է այդ բողոքները որպես վատ հիմնավորված և վավերագրված, և առանց քննության առնելու, նրանց մեծ մասը մերժվել են ըստ էության: ԿՀՀ-ն նաև մերժել է հետագա խնդրանք-դիմումները՝ հետաձգել հանրաքվեի արդյունքների հայտարարությունը և հետաքննել ենթադրյալ խախտումները՝ ըստ ընթացակարգային հիմքի կամ խախտումների վերաբերյալ բավարար ապացույցների բացակայության պատճառով:

ԿՀՀ-ի որոշումները հանրաքվեի արդյունքների վերաբերյալ կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարանում՝ միայն Նախագահի կողմից կամ խորհրդարանի անդամների (ԽԱ) առնվազն մեկ հինգերորդի կողմից: Դիմումներ ներկայացնելու այս սահմանափակ իրավական կարգավիճակը (տես՝ Հանրաքվեի Օրը և Արդյունքների Հրապարակում) կասկածի տակ է դնում ընտրական շահագրգիռ կողմերի համար դատական պաշտպանության առկայությունը:¹⁰ Սահմանադրական դատարանը իր տրամադրության տակ ունի 50 օր՝ հանրաքվեի արդյունքների վերաբերյալ որոշում կայացնելու համար, որը կարող է երկարացվել ևս մեկ ամսով, որը չափից դուրս երկար ժամկետ է ընտրական վեճերը ողջամիտ ժամկետներում լուծելու համար:¹¹

Հանրաքվեի/ընտրությունների վարչարարության և դատարանների նկատմամբ վստահության և հավատի բացակայության պատճառով ընտրական վեճերի լուծման արժանահավատությունը խաթարվել է: Մի քանի հայցվորների թերահավատ վերաբերմունքը կարող թուլացնել ընտրական վարչարարության բոլոր մակարդակներում ամբողջականությունը բարելավելու ջանքերը:

¹⁰ Վենետիկի հանձնաժողովի 2007 թ. Հանրաքվեի հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի Բաժին 3.3.գ-ը նախատեսում է՝ «Բոլոր ընտրողները պետք է բողոքարկելու իրավունք ունենան: Պետք է ողջամիտ քվորում կիրառվի հանրաքվեի արդյունքների վերաբերյալ ընտրողների բողոքների նկատմամբ»: Տես նաև՝ Պետկոմի և ուրիշներ ընդդեմ Բուլղարիայի վճիռ, 82-83 կետեր, ՄԻԵԴ, 2009թ.:

¹¹ Վենետիկի հանձնաժողովի 2002թ. Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի 99-րդ բաժինը նախատեսում է. «Երեքից հինգ օր ժամկետը՝ առաջին ատյանի դատարաններում (և՛ բողոքներ ներկայացնելու, և՛ որոշումներ ընդունելու համար) թվում է ողջամիտ ժամկետ՝ ընտրություններից առաջ որոշումների ընդունման համար: Սակայն, թույլատրելի է մի քիչ ավելի շատ ժամանակ հատկացնել Գերագույն և Սահմանադրական դատարաններին՝ վճիռներ կայացնելու համար»:

Ավելի արդյունավետ քննություն երաշխավորելու համար բողոքների և դիմումների իրավական շրջանակները պետք է վերանայվեն: Մասնավորապես, ընտրական գործընթացի վերաբերյալ բողոքներ ներկայացնելու իրավական կարգին պետք է տալ ավելի լայն երաշխիքներ: Ընտրությունների և հանրաքվեի արդյունքները վերանայելու պահանջների ներկայացման ժամկետները պետք է թույլ տան դիմողներին պատրաստել դիմումները և ապահովել ժամանակին արված քննություն:

V. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հանրաքվեն գործընթացները կազմակերպվել էին ընտրական հանձնաժողովի եռաստիճան համակարգով, որը ներառում է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որն իրականացնում է Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի գործառույթները, 41 ԸԸՀ-ները և 1.997 ՏԸՀ-ները, որոնք կազմվել են Ընտրական օրենսգրքում սահմանված ընթացակարգերի համապատասխան:

ԿԸՀ-ն, որը վերջին անգամ գումարվել 2011 թ., բաղկացած է յոթ անդամներից, ովքեր նշանակվել են Նախագահի կողմից՝ Մարդու իրավունքների պաշտպանի (երեք անդամներ) և Վճռաբեկ դատարանի նախագահի և Փաստաբանների պալատի նախագահի (երկուական անդամներ) առաջարկությամբ: ԸԸՀ-ները մշտական գործող մարմիններ են, որոնց յոթ անդամները նշանակվել են ԿԸՀ-ի կողմից ինքնառաջադրված քաղաքացիներից՝ 6 տարի ժամկետով: Ընտրական օրենսգիրքը ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի կազմի համար նախատեսում է գեղդերային քվոտաներ: ԿԸՀ-ի երեք անդամները կանայք են, ինչպես նաև կանայք են բոլոր ՏԸՀ-ների անդամների 34 տոկոսը և ԸԸՀ նախագահների՝ 10 տոկոսը:

ԿԸՀ-ն տեղեկացրել է, որ բոլոր ՏԸՀ-ները ձևավորվել են ԸԸՀ-ների կողմից նոյեմբերի 14-ին՝ համապատասխան օրենքով նախատեսված վերջնաժամկետի: Խորհրդարանում ներկայացված յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն և դաշինք իրավունք ուներ յուրաքանչյուր ՏԸՀ-ում, առաջադրել մեկ հանձնաժողովի անդամ, իսկ ՏԸՀ-ի երկու անդամներ պետք է առաջադրվեին ԸԸՀ անդամների կողմից: Բոլոր իրավասու քաղաքական կուսակցությունները, բացառությամբ ՀԱԿ-ի և Ժառանգության, լրացրեցին իրենց քվոտաները:¹² Դեկտեմբերի 4-ին, քաղաքացիական հասարակական խմբերը հայտարարել էին, որ ի խախտում օրենքի՝ ավագանիների 203 անդամներ սկսել են աշխատել որպես ՏԸՀ-ների անդամներ: ԿԸՀ-ն հայտնել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին, որ այդ հարցը ստուգված է ԸԸՀ-ների կողմից, և այն անձինք, ովքեր իրավասու չեն աշխատել ՏԸՀ-ներում, փոխարինվել են այլ անձանցով մինչև քվեարկության օրը:

Չնայած թափանցիկ և արհեստավարժ աշխատելու ջանքերին, Հանրաքվեի հանձնաժողովները տուժում էին շահագրգիռ կողմերի վստահության բացակայությունից և այն տարածում գտած մտայնությունից, որ ստորին աստիճանի հանձնաժողովները

¹² ԿԸՀ-ն հայտարարել է, որ ՀԱԿ-ը իր անդամներին չի նշանակել 205 ՏԸՀ-ներում, իսկ Ժառանգությունը՝ 118 ՏԸՀ-ներում:

անկարող էին անաչառ կերպով իրենց պարտականությունները կատարել: Այս ընկալումն մեծապես հիմնված է նախորդ ընտրությունների փորձի վրա:

Ընտրողների համար ԿՀՀ-ի նախատեսած տեղեկատվական քարտզությունը իրենից ներկայացնում էր երկու տեսահոլովակներ (ժեստերի լեզվի թարգմանությամբ), որոնք հեռարձակվում էին հանրային և մասնավոր հեռարձակողների կողմից ամբողջ հանրապետության տարածքում: Բացի այդ, ԿՀՀ-ն թողարկել էր մեկ պաստառ՝ քվեարկության ժամանակ նույնականացման քարտերի վերաբերող տեղեկատվությամբ, որը փակցված էր ընտրատեղամասերում:

Քվեարկության օրը ԿՀՀ-ն բոլոր 1.997 ընտրատեղամասերին տրամադրել էր սահմանադրական փոփոխությունների նախագծի երկու օրինակ՝ ընտրողներին խորհրդատվությամբ ապահովելու նպատակով: Նախագիծը նաև հրատարակվել էր Պաշտոնական տեղեկագրում՝ հատուկ խմբագրությամբ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթում, հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում և ԿՀՀ-ի կայքում, ինչպես նաև բաժանվել էր պետական հաստատություններին:

ԿՀՀ-ն նաև պատրաստել էր ընտրողների համար տեղեկատվական նյութեր և քվեարկության համար Բրեյլ ձևանմուշ՝ տեսողական խանգարումներ ունեցող ընտրողների համար: Սակայն, արդեն երկար նախապատմություն ունեցող խնդիրը՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների համար տեղամասերի հասանելիության հարցը արդյունավետ կերպով լուծված չէր: Շրջիկ արկղով քվեարկությունը միայն առկա էր առողջապահության հաստատությունների ընտրողների համար, իսկ տանը գտնվող, անկողնային հիվանդ ընտրողներին նման հնարավորություն չէր ընձեռվել, և գործնականում, նրանք զրկված էին քվեարկելու հնարավորությունից: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի գրուցակիցները հաղորդել են, որ ընտրատեղամասերի ճնշող մեծամասնությունը հասանելի չէր տեղաշարժման սահմանափակ հնարավորությունների տեր անձանց համար, և նման կատեգորիայի ընտրողների համար չկա քվեարկության որևէ ողջամիտ այլընտրանք:¹³

Իշխանությունները պետք է նկատի ունենան տարբերակներ ընտրատեղամասերի հասանելիության բարելավման համար և ապահովեն լրացուցիչ մեխանիզմներ, որոնք թույլ կտան սահմանափակ տեղաշարժման հնարավորություն ունեցող անձանց իրականացնել քվեարկելու իրենց իրավունքը, որը հետագայում էլ կնպաստի համընդհանուր ընտրական իրավունքի իրագործմանը:

Իրավական դաշտը ապահովում է միջազգային և քաղաքացիական դիտարկում և իրավունք է վերապահում կուսակցությունների վստահված անձանց ներկա լինել բոլոր ընտրատեղամասերում: Հանրաքվեի համար հավատարմագրվել էին մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև օտարերկրյա կենտրոնական ընտրական հանձնաժողովների և դիվանագիտական առաքելությունների

¹³ ԿՀՀ-ի 2011 թ. թիվ 19 որոշումը նախատեսում է աջակցություն հաշմանդամություն ունեցող ընտրողներին, ովքեր չեն կարողանում մուտք գործել տեղամաս: Այս որոշումը չի երաշխավորում քվեարկության գաղտնիությունը և այլ ընտրողների հետ հավասար հիմունքներով մասնակցությունը:

ներկայացուցիչներ:¹⁴ Չնայած նրան, որ Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ տեղական ղիտորդները ստանան «վկայականներ», օրենքում չկա որևէ դրույթ՝ որակավորման քննության պարտադիր լինելու վերաբերյալ: Սակայն, 2011 թ. ընդունված ԿԸՀ No 36 որոշման համապատասխան, ԿԸՀ-ն պարտավորեցնում է քաղաքացի ղիտորդներին անցնել որակավորման քննություն՝ ղիտորդի վկայական ստանալու համար, որը դե ֆակտո հավատարմագրման փաստաթուղթ է: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ի քաղաքացիական հասարակական կազմակերպությունների որոշ գրուցակիցներ ներկայացնում են այդ թեստավորման և հավատագրման պահանջները որպես դժվարին բյուրոկրատական խոչընդոտ:

Ինչպես ավելի վաղ առաջարկվել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից, ԿԸՀ-ի կողմից ղիտորդների թեստավորումը չպետք է լինի պարտադիր կամ լինել նախապայման քաղաքացի ղիտորդների հավատարմագրման համար:

Բ. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հայաստանն ունի ընտրողների պասիվ գրանցման համակարգ: Ընտրողների ռեգիստրը հիմնված է բնակչության պետական ռեգիստրի վրա և գտնվում է Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (ԱՎՎ) իրավասության տակ: Ոստիկանության իրավասությունում է նաև հանել ընտրողներին ցուցակից և կազմել ընտրողների ցուցակներ՝ ըստ տեղամասերի: Նախնական ընտրացուցակները փակցվել էին ընտրատեղամասերում՝ հանրության կողմից ստուգման համար, ինչպես նաև ԱՎՎ-ի և ԿԸՀ-ի կայքերում՝ հոկտեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 1-ը: ԱՎՎ-ի կողմից դեկտեմբերի 4-ին հրապարակված ընտրողների վերջնական ցուցակներում ընդգրկված էին 2,550,323 քաղաքացիներ, ովքեր քվեարկելու իրավունք ունեին երկրի ներսում, և 265 ընտրողներ գրանցվել էին քվեարկելու էլեկտրոնային եղանակով արտասահմանից:¹⁵ Համաձայն ԿԸՀ-ի վերջնական արդյունքների արձանագրության, ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 2.566.998 ընտրող:

ԱՎՎ-ն ջանքեր էր գործադրում բարելավելու ընտրողների ռեգիստրի հանդեպ վստահությունը, այդ թվում, հաղորդում էր ներկայացրել դոնից դրան ստուգումների վերաբերյալ և նախաձեռնել էր համազգային ինտրանետային համակարգ, որի օգնությամբ քաղաքացիական կացության գրանցման գրասենյակների տվյալները փոխանցվում էին բնակչության և ընտրողների ռեգիստրին: Սակայն, ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ի բազմաթիվ գրուցակիցները տեղեկացնում էին ընտրողների ցուցակների ճշգրտության չլուծված

¹⁴ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին ներկայացրել է, որ Հայաստանի պրակտիկայում ընդունված է հավատարմագրել առավելագույնը երկու ղիտորդների՝ յուրաքանչյուր ղիվանագիտական առաքելությունից, և, որ իրենք ոչ մի պաշտոնական դիմում չեն ստացել որևէ արտասահմանյան քաղաքացիական հասարակական կազմակերպությունից: Որոշ միջազգային քաղաքացիական հասարակական կազմակերպությունների գրուցակիցներ տեղեկացրել էին ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին, որ նրանք ի վիճակի չեն եղել ձեռք բերել հստակ տեղեկատվություն, թե ինչպես կարելի է դիմել ԿԸՀ-ին հավատարմագրման համար, սակայն, նրանք կարողացել են դիտարկել հանրաքվեն որպես լրագրողներ՝ համագործակցելով տեղական ղիտորդների հետ:

¹⁵ Ընդհանուր թիվը ներառում է ընտրողների հատուկ ցուցակներ՝ չգրանցված մարդկանց, հերթապահության մեջ գտնվող ոստիկանների և բուժհիմնարկներում գտնվող ընտրողների համար:

երկարամյա խնդիրների մասին, այդ թվում՝ միևնույն հասցեում գրանցված անհարկի մեծ թվով մարդկանց կամ մահացած մարդկանց մասին, ովքեր ընդգրկված են ընտրողների ցուցակներում:

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի զրուցակիցների մեծ մասը իրենց մտահոգությունն էին արտահայտում քվեարկության օրը ընտրողների ցուցակների հնարավոր մեծածավալ շահարկումների վերաբերյալ, այդ թվում, արտերկրում գտնվող մարդկանց փոխարեն քվեարկություն: Բարձրաձայնելով այդ մտահոգությունները՝ շատ զրուցակիցներ գտնում էին, որ ընտրողների ցուցակներում արտերկրում գտնվող ընտրողների մասին գրառումները կարող են դառնալ արդյունավետ միջոց հնարավոր կեղծիքները կանխելու համար: Քաղաքական կուսակցությունները և քաղաքացիական հասարակությունը վերահաստատել են իրենց վաղեմի առաջարկությունը՝ հասարակական ստուգման համար հանրությանը ներկայացնել քվեարկած անձանց ցուցակները, որը կարող է ծառայել երաշխիք ընդդեմ ընտրախախտումների:¹⁶ Իշխանությունների շարունակվող դժկամությունը քննարկել այս և այլ հնարավոր երաշխիքները կանխարգելելու շահարկումները խարխլում է հասարակության վստահությունը ընտրական գործընթացի նկատմամբ:¹⁷

Ինչպես նշված է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ նախորդ հանձնարարականներում, համապատասխան մարմինները պետք է բարելավեն ընտրողների ռեգիստրի ճշգրտությունը և ձգտեն հասնել փոխհամաձայնության արդյունավետ լուծումների վերաբերյալ՝ անդրադառնալով հարատևող այն ընկալմանը, որ ընտրողների ցուցակներում Հայաստանից բացակայող քաղաքացիների ընդգրկվածությունը կարող է շահարկվել՝ հեշտացնելով բացակայող անձի փոխարեն քվեարկելը կամ այլ ընտրախախտումներ:

¹⁶ Թեև Վենետիկի հանձնաժողովը սա չի համարում որպես լավ գործառույթ, քանի որ քվեարկությունից ձեռնպահ մնալը կարող է լինել քաղաքական ընտրության ցուցանիշ, միաժամանակ պետք է նաև նշվի, որ նշումներ արված ընտրացուցակները հանրային ստուգմանը մատչելի դարձնելը արգելված չէ միջազգային իրավունքով: 2011թ. ՄԱԿ-ի No. 34 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի Ընդհանուր Մեկնաբանության 19-րդ Հոդվածը նախատեսում է, որ ազատ արտահայտվելու իրավունքը "ընդգրկում է տեղեկատվություն ստանալու իրավունք... հասարակական մարմնի կողմից, անկախ նրանից, թե այդ տեղեկատվությունը ինչպես է պահվում: Տեղեկատվության հանրամատչելիության իրավունքը ներառում է այն իրավունքը, որով լրատվամիջոցները իրավունք ունեն ստանալ տեղեկատվություն հասարակական գործերի վերաբերյալ և ընդհանուր հանրության իրավունքը հետամուտ լինել լրատվամիջոցների թողարկումներին»: Ընտրողների նշումներ արված ցուցակները հանրության սեփականություն դարձնելը կիրառվում է որոշ երկրներում, օրինակ Միացյալ Թագավորությունում:

¹⁷ Այս խնդրի լուծման մոտեցումները կարող են նաև ներառել քվեարկության ընթացակարգերի ավելի խիստ երաշխիքների ընդունում, ներառյալ երկրի սահմաններից դուրս գտնվող ընտրողների հատուկ ցուցակների ստեղծում, ընտրողների գրանցման ակտիվ բաղադրիչի ներդրում, որը հասանելի կլինի Հայաստանի սահմաններից դուրս գտնվող բոլոր քաղաքացիներին համար կամ ընտրողների ստորագրած ցուցակները հասանելի դարձնել կուսակցություններին և դիտորդներին սահմանափակ ժամանակահատվածի ընթացքում՝ բողոքները ներկայացնելու ժամանակ:

Գ. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՕՐ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՄԱՐԱԿՈՒՄԸ

Հանրաքվեի օրը ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ն չի կատարել համապարփակ և հ համակարգված դիտարկում, սակայն, ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ն այցելել է սահմանափակ թվով ընտրատեղամասեր և դիտարկել է քվեարկության, հաշվարկման և արդյունքների աղյուսակավորման ընթացքը:

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի կողմից դիտարկված ընտրատեղամասերում քվեարկության գործընթացը, ընդհանուր առմամբ, հանգիստ է անցել, և քվեարկության ընթացակարգերը, հիմնականում, պահպանվել են: Սակայն, որպես հետևանք օրենքի նոր ընդունված դրույթի, ընտրողների նույնականացման վկայականները չէին կնքվել, ինչը հանգեցրել էր բազմակի քվեարկության դեմ երաշխիքի հակասական կիրառմանը:

Համապատասխան մարմինները պետք է ներկայացնեն արդյունավետ և հետևողական երաշխիքներ բազմակի քվեարկության դեմ, որը կկիրառվի բոլոր ընտրողների նկատմամբ՝ անկախ նույնականացման նպատակով ընտրողի կողմից օգտագործվող փաստաթղթի տեսակից:

Հաշվարկի գործընթացը, որն ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ն դիտարկել է ԸԸՀ 6 և ԸԸՀ 10 երկու ընտրատեղամասերում համապատասխանաբար, նշանավորվել է ՀՀԿ-ի վստահված անձանց կողմից կատարված էական միջամտությամբ, մի բացասական երևույթ, որը նախկինում քննադատվել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից:

Քաղաքական կուսակցությունների վստահված անձինք չպետք է որևէ կերպ կաշկանդված լինեն իրականացնել օրենքով նախատեսված բոլոր գործառնությունները, բայց նրանք չպետք է գործադրեն ճնշում կամ միջամտեն քվեարկության օրվա գործողություններին: Քաղաքական կուսակցությունները պետք է ապահովեն իրենց դիտորդների համար համապատասխան ուղղորդում և ուսուցում և կրեն իրավական և քաղաքական պատասխանատվություն՝ իրենց վստահված անձանց վարքագծի համար:

ԸԸՀ-6-ի մի տեղամասում, ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ն դիտարկել է ՏԸՀ անդամների և ՀՀԿ-ի վստահված անձանց կողմից քվեների արդյունքների շահարկում՝ ի օգուտ «Այո»-ի: Մասնավորապես, որոշ վավեր «Ոչ» քվեաթերթիկներ անօրինական կերպով հանվել են, իսկ հետո վերադարձվել են որպես անվավեր քվեաթերթիկներ կամ դրվել են սխալ փաթեթում: ԸԸՀ-10-ի մի տեղամասում ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ն դիտարկել է քվեների հաշվարկի ընթացքը, որտեղ գործընթացի թափանցիկությունը չի ապահովվել և դիտարկվել է անհետևողական մոտեցում քվեաթերթիկների վավերականության որոշման հարցում: Ընթացակարգային սխալները հանգեցրել են նրան, որ չեղյալ են համարվել շատ վավեր «Ոչ» քվեներ: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ն դիտարկել է ձայների հաշվարկմա գործընթացը երկու տեղամասերում և չի կարող որոշել, թե արդյոք հայտնաբերված թերությունները իրենցից ներկայացնում են ավելին քան հակաօրինական առանձին դեպքեր:

Տեղական դիտորդները, ընդդիմադիր խմբերը և լրատվամիջոցները բարձրաձայնում էին մեղադրանքներ համատարած խախտումների, միջամտությունների և ահաբեկումների մասին քվեարկության և ձայների հաշվարկի գործընթացի ընթացքում երկրի ամբողջ տարածքում: Դեկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների պաշտպանը նամակ է ուղարկել

իրավապահ մարմիններին 67 ահազանգերի վերաբերյալ, որոնք իր գրասենյակը ստացել է այլ խախտումների հետ միասին, որոնց թվում են, քվեատուփերի լցումում, հաշվարկման ընթացքում տեղի ունեցած խախտումներ, հանձնաժողովի անդամների կաշառում, վարչական միջոցների չարաշահում, բազմակի և ուրիշի փոխարեն քվեարկում, ընտրողի վրա անհարկի ճնշման գործադրում, դիտարկման միջամտություն: Շատ դեպքերում կից ներկայացվել են տեսանյութեր: Պետական իշխանությունները խոստացել էին, որ բոլոր մեղադրանքները կքննվեին ԿԸՀ-ի և համապատասխան իրավապահ մարմինների կողմից, բայց, միևնույն ժամանակ հերքում էին, որ խախտումները համակարգված էին և ենթադրում էին, որ առաջատար քաղաքացիական հասարակական խմբերը կողմնակալ էին, քանի որ հայտնի էր, որ նրանք դեմ էին հանրաքվեին:

Մի քանի քաղաքացիական հասարակական խմբեր նշել էին, որ ողջամիտ քայլեր չէին ձեռնարկվել քվեարկության, հաշվարկման և արդյունքների աղյուսակավորման ընթացակարգերի վաղեմի թերությունները վերացնելու համար, որոնք հարցականի տակ են դնում հայտարարված արդյունքների նկատմամբ վստահությունը: Դեկտեմբերի 7-ի վերջնաժամկետին ընդառաջ, 12 ԸԸՀ-ներ ստացել են 79 դիմումներ՝ արդյունքների վերահաշվարկի պահանջով, և դրանցից 53-ի դեպքում կատարվել են վերահաշվարկներ: Վերջնական արդյունքները միայն մի փոքր են տարբերվել նախնական արդյունքներից, և ԿԸՀ-ն մատնանշել է, որ վերահաշվարկը չի հայտնաբերել որևէ լուրջ անճշտություն: ՀԱԿ-ը պնդում է, որ ԿԸՀ-ն միտումնավոր առաջնությունը տվել է «Այո» կողմնակիցների կողմից պահանջված վերահաշվարկներին և / կամ «ապօրինաբար մերժել է» այն վերահաշվարկները, որոնք ներկայացված էին «Ոչ» կողմնակիցների կողմից: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ը ի վիճակի չի եղել ստուգել այս պնդումների իսկությունը: Բոլոր երեք դիմումները՝ երեք ընտրատեղամասերում արդյունքները անվավեր ճանաչելու մասին մերժվել են հանրաքվեի վարչարարության ընթացակարգային հիմքերով: ¹⁸ Դեկտեմբերի 13-ին ԿԸՀ-ն հրապարակել է վերջնական արդյունքները և հաստատել, որ սահմանադրական փոփոխություններն ընդունվել են: Հանրաքվեի արդյունքները վիճարկելու մասին Սահմանադրական դատարանում ներկայացնելու խորհրդարանական ձևաթուղթը ձախողվել է՝ անհրաժեշտ ստորագրությունների պակասի պատճառով:¹⁹

Դեկտեմբերի 14-ի դրությամբ, ոստիկանությունը հայտարարել է, որ իրենք ստացել են 427 ահազանգ ընտրախախտումների վերաբերյալ և հարուցվել է 17 քրեական գործ: Դեկտեմբերի 25-ի դրությամբ, ՀՀ գլխավոր դատախազությունը հաղորդել է, որ հետաքննվել են 499 ահազանգեր, որոնք վերաբերում էին այլ անձի փոխարեն քվեարկելուն և բազմակի քվեարկությանը, ինչպես նաև հանձնաժողովների, դիտորդների և վստահված անձանց գործունեության խոչընդոտմանը, և, որ հարուցվել է 52 քրեական գործ: ՀՀԿ-ն ներկայացնող ՏԸՀ մի անդամ արդեն ձերբակալվել էր հանրաքվեից մեկ շաբաթ առաջ, քանի որ նրան տեսանկարել են ՀԱԿ-ի ներկայուցիչ ՏԸՀ անդամին ընտրակաշառք

¹⁸ Այդ դիմումները ներկայացվել են ՀԱԿ-ի ներկայացուցիչ ՏԸՀ անդամի, Ժառանգություն ՏԸՀ անդամի և Ժառանգություն կուսակցության անդամի կողմից:

¹⁹ Դեկտեմբերի 19-ին, խորհրդարանում ՀԱԿ խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյանը հայտարարել է, որ 19 պատգամավորներ ստորագրել են ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացվող ձևաթուղթը, որով կասկածի տակ է դնում մոտ 500,000 ձայների վավերականությունը: Դեկտեմբերի 21-ին, Սահմանադրական դատարանը հաստատել է, որ նման դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է առնվազն 27 պատգամավորների համաձայնությունը:

առաջարկելիս, որպեսզի վերջինս անտեսի հանրաքվեի ընթացքում տեղի ունեցած ընտրախախտումները: Նրա նկատմամբ հարուցված քրեական գործը փոխանցվել է դատարան:

Դատախազությունները և այլ իրավապահ մարմինները, ինչպես նաև ԿԸՀ-ն պետք է ակտիվորեն և թափանցիկ հետամուտ լինեն, որ հանրաքվեի ընթացքում տեղ գտած ընտրախախտումներին առնչվող գործերը, հետաքննվեն ժամանակին և անհրաժեշտության դեպքում նախաձեռնեն և հարուցեն քրեական կամ վարչական վարույթ ընդդեմ ենթադրյալ օրինազանցների: Դատախազությունները, ոստիկանությունը և ԿԸՀ-ն պետք է անհապաղ արձագանքեն ընտրախախտումների բոլոր փուլերի ընթացքում ստացված հաղորդումներին՝ բացահայտելու և կանխարգելելու ընտրական գործընթացի հնարավոր չարաշահումները:

VI. ՔԱՐՈԶԱՐՇԱՎ, ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ա. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Քարոզչության իրավունքը երաշխավորված է քաղաքացիներին, հանրաքվեի նախաձեռնողին, խորհրդարանական խմբակցություններին, կուսակցություններին և քաղաքացիական հասարակական կազմակերպություններին: Օրենքը արգելում է դատավորներին, իրավապահ մարմիններին և դատախազությանը, զինվորականներին, հանրաքվեի հանձնաժողովների անդամներին, բարեգործական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին զբաղվել քարոզչությամբ: Հաշվի առնելով հանրաքվեին ներկայացվող հարցերի ներառական հանրային քննարկման կարևորությունը, այս բանավեճին ազդեցիկ քաղաքացիական հասարակական կազմակերպությունների՝ ինչպես օրինակ բարեգործական և կրոնական կազմակերպությունների մասնակցության սահմանափակումը անհամաչափ է:²⁰

2015 թվականին Հանրաքվեի մասին օրենքում կատարված փոփոխությունների համապատասխան պետական պաշտոնյաների քարոզչության կանոնները փոխել են: Համաձայն փոփոխված օրենքի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաները, ովքեր զբաղեցնում են քաղաքական ու հայեցողական պաշտոններ, կարող են զբաղվել քարոզչությամբ :²¹ Պաշտոնատար այլ անձինք, ինչպես

²⁰ Ըստ 1990 թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի Կետ 24-ի, «Ժողովրդավարական հասարակության մեջ իրավունքների և ազատությունների ցանկացած սահմանափակում պետք է շաղկապվի կիրառվող օրենքի նպատակներից մեկի հետ և պետք է խստիվ համապատասխանի այդ օրենքի նախանշմանը»: Վենետիկի հանձնաժողովի 2007 թ. Հանրաքվեի հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի Բաժին II.1.բ նախատեսում է, որ « [խոսքի ազատության, հավաքների ազատության և քաղաքական նպատակներով միավորման ազատության] սահմանափակումները պետք են ունենան օրենքով նախատեսված հիմնավորում, պետք է ներկայացնեն հանրության շահերը և համապատասխանեն համաչափության սկզբունքին»:

²¹ Ըստ Հանրային ծառայության մասին օրենքի, քաղաքական պաշտոնյա է համարվում ՀՀ Նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, վարչապետը, ՀՀ Ազգային անվտանգության

օրինակ ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմը, կարող են զբաղվել քարոզչությամբ, բայց ոչ իրենց պաշտոնական պարտականությունները իրականացնելիս: Այս հանրաքվեի ընթացքում, իշխանությունների կողմից «Այո» քարոզարշավի համար խոշոր հանրային միջոցներ են մոբիլիզացվել: «Այո» նախընտրական շտաբերը ղեկավարվում էին վարչապետի կողմից, և նախագահի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարը, Վերահսկիչ պալատի և ՀՀ-ի Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարները ներգրաված էին քարոզչության մեջ: Հաղորդվում էր, որ մարզպետները անցկացրել են իրենց մարզերում «Այո» քարոզարշավներ: Քանի որ այս բոլոր պաշտոնյաները վարձատրվում են պետական և տեղական բյուջեների միջոցով, ապա նրանք զգալի հանրային միջոցներ են օգտագործել են «Այո» քարոզարշավի ընթացքում, դրանով իսկ մարտահրավեր նետելով ԵԱՀԿ-ի 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.6 և 7.7 կետերին և այլ միջազգային պարտավորություններին:²²

Ընտրությունների և հանրաքվեների իրավական շրջանակները պետք է կարգավորեն քարոզչության համար հանրային միջոցների օգտագործումը՝ հավասար հնարավորություն և ազատություն ապահովելով ընտրողներին կարծիք ձևավորելու համար: Հանրաքվեի մասին օրենքում պետք է կատարել փոփոխություններ՝ պարտադրելով ավելի խիստ սահմանափակումներ՝ պետական պաշտոնյաների կողմից քարոզչություն գործունեությամբ զբաղվելու առնչությամբ:

ՀԱԿ-ն ու Ժառանգությունն, որոնք հանդես էին գալիս <<Ոչ>> դիրքորոշմամբ, ընդհանուր առմամբ, գործում էին զուգահեռաբար, բայց ոչ անհրաժեշտաբար համակարգված աշխատելաճով, համագործակցելով արտախորհրդարանական «Նոր Հայաստան» շարժման հետ: ՀԱԿ-ի քարոզչությունը հիմնականում կոչ էր անում քվեարկել հօգուտ «Ոչ»-ի և փաստավավերագրել օրենքի ենթադրյալ խախտումները, մինչդեռ «Նոր

խորհրդի քարտուղարը, նախարարները և համայնքների ղեկավարները: Հայեցողական պաշտոններն են՝ նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, դեսպանները, պատգամավորները, խորհրդականները, մամուլի խոսնակները և ՀՀ նախագահի, վարչապետի, նախարարների, պատգամավորների, տարբեր տեսչությունների ղեկավարների, գլխավոր դատախազի, քննչական կոմիտեի ղեկավարի, մարզպետների, համայնքների ղեկավարների օգնականները և Երևանի գլխավոր ճարտարապետը:

²² 1990 թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությունը է պահանջում է մասնակից պետություններին « ապահովել, որ օրենքն ու պետական քաղաքականությունը թույլ տան քաղաքական համաշարժումների անցկացում ազատության ու ազնվության մթնոլորտում», իսկ 7.6 կետը պահանջում մասնակից պետություններին «ապահովել ... անհրաժեշտ իրավաբանական երաշխիքների ընձեռում նման քաղաքական կուսակցություններին և կազմակերպություններին, որոնք՝ նրանց հնարավորություն են տալիս միմյանց հետ մրցել օրենքի և իշխանության մարմինների առջև հավասարության հիմունքի հիման վրա»: 1996 թ.-ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի No. 25 գլխավոր մեկնաբանության 19-րդ կետը, ՔՔԻՄԴ-ի հոդված 25-ը ընդգծել են, որ ընտրողները պետք է լինեն ազատ քվեարկելու «կողմ կամ դեմ ցանկացած առաջարկի հանրաքվեի կամ հանրաքվեի միջոցով, և ազատ լինեն աջակցել կամ ընդդիմանալ իշխանությանը, առանց անհարկի ազդեցության կամ ցանկացած տեսակի հարկադրանքի, որը կարող է աղավաղել կամ զսպել ընտրողների կամքի ազատ արտահայտումը ... Ընտրողները պետք է կարողանան ինքնուրույն, ազատ ձևավորել կարծիքներ... առանց ցանկացած տեսակի հարկադրանքի, դրդման կամ սպեկուլյատիվ միջամտության»:

Հայաստան» - ը մեծապես կոչ էր անում չմասնակցել հանրաքվեին և հիմնականում ուշադրության կենտրոնում էր պահում հանրային բողոքի ակցիաների կազմակերպումը:

Հանրաքվեի մասին օրենքը երաշխավորում է ազատ քարոզչության, այդ թվում լրատվամիջոցների, հասարակական քարոզչությանը վերաբերող միջոցառումների, տպագիր հրատարակությունների տարածման, ինչպես նաև տեսա-ձայնա նյութերի միջոցով: Այս հանրաքվեի ընթացքում կազմակերպությունների, հավաքների, խոսքի ազատության և տեղաշարժման հիմնարար ազատությունները հիմնականում պահպանվել են: Դեկտեմբերի 1-ից 6 - ն ընկած ժամանակահատվածում, Երևանում «Ոչ»-ի կողմնակիցների հավաքների ընթացքում եղել են հաղորդումներ ոստիկանության հետ առանձին քաջքուկների դեպքերի, ինչպես նաև հավաքների մասնակիցների ձերբակալությունների մասին:²³ Ոստիկանությունը մեղադրում էր ցուցարարներին հայտարարված ուղուց շեղվելու և ոստիկանության հրամաններին չենթարկվելու համար: Դեկտեմբերի 11-ին մարդու իրավունքների պաշտպանը դիմել է ոստիկանապետին՝ հետ կանչելու ոստիկանության ավելի վաղ ընդունած որոշումը, այն է՝ թույլ չտալ ցուցարարներին վրաններ տեղադրել Երևանի Ազատության հրապարակում:

Հանրաքվեի պաշտոնական քարոզարշավը մեկնարկեց Նախագահի կողմից հրամանագիրը հրապարակվելուց անմիջապես հետո և ավարտվեց քվեարկության նախորդ օրը: 2015 թ. Հանրաքվեի մասին օրենքի մեկ այլ փոփոխություն թույլատրում է քարոզչություն կատարել պաշտոնական քարոզարշավի ժամանակացույցից դուրս, բացառությամբ քարոզչության լրության ժամանակահատվածի: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի մի քանի զրուցակիցներն ընդգծել են, որ այս փոփոխությունից շահել է «Այո» քարոզչությունը, որը սկսել է գործել մինչև հանրաքվեի պաշտոնական հրապարակումը:

Բ. ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձինք կամ խմբերը կարող են ստեղծել քարոզչության հիմնադրամ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացվելով հատուկ հաշիվ: Հիմնադրամը ստեղծվում է անձնական միջոցներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց կամավոր մուծումներից: Հիմնադրամում մուծումներ կատարելու իրավունք չունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բյուջետային հիմնարկները (կազմակերպությունները), օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, բարեգործական, կրոնական, միջազգային կազմակերպությունները և միջազգային հասարակական շարժումները, ինչպես նաև բաժնետիրական կապիտալում 30 տոկոսից ավելի օտարերկրյա բաժնեմաս ունեցող կազմակերպությունները:

Օրենքը նախատեսում է հանրաքվեի հիմնադրամ 25 մլն ՀՀ դրամին համարժեք մուծումների սահմանափակում քաղաքական կուսակցությունների, հասարակական

²³ «Ոչ» քարոզարշավի կողմնակիցները նաև հայտարարել են, որ իշխանությունները տրանսպորտային ընկերությունների վրա ճնշում գործադրելով՝ իրենց կողմնակիցներին խոչընդոտել են գալ Երևան՝ մասնակցելու դեկտեմբերի 1-ի հավաքին և երկու այլ հավաքներին: Այս պնդումը չի հաստատվել ոստիկանության կողմից:

կազմակերպությունների և խորհրդարանական խմբակցությունների կողմից,²⁴ որոնք կարող են մուծում կատարել միայն մեկ հանրաքվեի հիմնադրամ: Անհատները կարող են տարբեր հիմնադրամներին նվիրատվել մինչև 100,000 ՀՀ դրամ: Օրենքը չի սահմանել մուծումների որևէ սահմանափակում իրավաբանական անձանց համար: Հանրաքվեի մեկ հիմնադրամին մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 100 մլն ՀՀ դրամը:

Հանրաքվեի մասին օրենքը պահանջում է, որ հանրաքվեի հիմնադրամը տնօրինողները ԿՀՀ Վերստուգիչ ծառայությունում հայտարարագրեն հանրաքվեի հիմնադրամ կատարված մուծումները և ծախսերը հանրաքվեի անցկացման օրվանից 20 և 10 օր առաջ, ինչպես նաև քվեարկության օրվանից 3 օր հետո, սակայն, օրենքը չի նախատեսում հրապարակել այդ հայտարարագրերը կամ ԿՀՀ-ի աուդիտի արդյունքները:²⁵ ԿՀՀ-ն, իր սեփական նախաձեռնությամբ, կազմել է ամփոփագրեր հանրաքվեի հիմնադրամների եկամուտների և ծախսերի մասին և դրանք տեղադրել է իր կայքում:²⁶ Սա ողջունելի քայլ է, սակայն, հետագայում պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ բարելավելու հանրաքվեի քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը:

Հանրաքվեների թափանցիկությունը բարելավելու համար պետք է փոփոխել քարոզարշավի ֆինանսավորման կանոնակարգերը՝ տրամադրել մանրամասն ֆինանսական հաշվետվություններ հանրաքվեի միջոցների վերաբերյալ և հիմնադրամի ԿՀՀ-ի աուդիտի արդյունքները դարձնել հանրորեն մատչելի և դրանք տեղադրել ԿՀՀ-ի կայքում:

Գ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Լրատվական դաշտը ընկալվում է որպես մեծապես քաղաքականացված: Մեծ թվով լրատվամիջոցներ գործում են սահմանափակ գովազդային շուկայում, որը պայմանավորված տնտեսական լճացման հետ էլ ավելի է փոքրացել: Հեռուստատեսությունը (TV) շարունակում է մնալ տեղեկատվության հիմնական աղբյուր, մինչդեռ համացանցը, որպես այլընտրանքային տեղեկատվության աղբյուր, արագորեն ձեռք է բերում ժողովրդականություն՝ հատկապես Երևանում: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի մի շարք գրուցակիցներ մտահոգություն էին հայտնում համապետական հեռարձակողների վրա հայտնի քաղաքական կուսակցությունների կողմից վերահսկողություն հաստատելու վերաբերյալ: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին չհաջողվեց ստուգել այս պնդումը լրատվամիջոցների սեփականության թափանցիկության բացակայության պատճառով, քանի որ համապետական սփռում ունեցող մասնավոր հեռուստաընկերությունների մեծ մասը գրանցված են որպես փակ բաժնետիրական ընկերություններ, և, այդպիսով, դրանց մասին

²⁴ Համարժեք է մոտ 47.400 եվրոյի (զեկուցումը գրելու պահին 1 եվրոն համարժեք էր մոտ 527 ՀՀ դրամին):

²⁵ Սակայն, նախընտրական քարոզչության նման տեղեկատվություն հրապարակելու պահանջը նախատեսված է Ընտրական օրենսգրքով:

²⁶ Ըստ ԿՀՀ-ի, հոկտեմբերի 10-ին և դեկտեմբերին 6-ի միջև ընկած ժամանակահատվածում ՀՀԿ-ի հիմնադրամ մուտք է գործել 80,899,527 ՀՀ դրամ և ծախսվել է 66,729,098 ՀՀ դրամ: ՀՅԴ-ի հիմնադրամ մուտք է գործել 7.113.367 ՀՀ դրամ և ծախսվել է 6.403.608 ՀՀ դրամ: ՀԱԿ-ի հիմնադրամ մուտք է գործել 5,198,826.8 ՀՀ դրամ և ծախսվել է 5.188.000 ՀՀ դրամ: ԽԿ հիմնադրամ մուտք է գործել 2.726.833.22 ՀՀ դրամ և ծախսվել է 2.662.624 ՀՀ դրամ: Ժառանգությունը ստացել է 2.501.990 ՀՀ դրամ և ծախսվել է 2.337.880 ՀՀ դրամ: ՕԵԿ-ը չի ստեղծել որևէ հիմնադրամ:

տեղեկությունները գրառված չեն հանրային ռեգիստրում: Հանրային հեռարձակողները՝ Հայաստանի Հանրային Հեռուստատեսությունը (Հ 1) և Հայաստանի հանրային ռադիոն (Արմոնադիո), դեկավարվում են Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի կողմից, որը կազմված է հինգ անդամներից, որոնք նշանակվում են Նախագահի կողմից: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) հանդիսանում է հեռարձակվող լրատվամիջոցները կարգավորող հիմնական մարմինը: Այն բաղկացած է ութ անդամներից, որոնց մի կեսը առաջադրված է նախագահի կողմից, իսկ մյուս կեսը՝ խորհրդարանի կողմից:

Միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի ապահովվի լրատվամիջոցների սեփականության լիարժեք թափանցիկությունը՝ պահանջելով և հնարավորություն տալով ՀՌԱՀ-ին հստակորեն նշել լրատվամիջոցների վերջնական և շահառու սեփականատերերին: Պետք է կիրառել լրացուցիչ վերահսկում և պատժամիջոցներ, որպեսզի լրատվամիջոցները իրավասու մարմիններին տրամադրեն սեփականության և ֆինանսավորման վերաբերյալ համապարփակ և ժամանակին արված տեղեկատվություն: Լրատվամիջոցների սեփականության և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հանրությանը:

Լրագրողների անվտանգությունը և նրանց աշխատանքի ապահովությունը շարունակում է մնալ լուրջ մտահոգության առարկա, քանի որ լրագրողները, որոնք լուսաբանում են հանրային միջոցառումները, հաճախ դառնում են ֆիզիկական կամ բանավոր հարձակումների օբյեկտ թե՛ ոստիկանության և թե՛ կուսակցության ներկայացուցիչների կողմից, և նման դեպքերը հազվադեպ են մանրակրկիտ հետաքննության առարկա դառնում²⁷: Մասնավորապես, դեկտեմբերի 9-ին, Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցիչը իր մտահոգությունն է հայտնել հանրաքվեն լուսաբանող լրագրողների նկատմամբ բազմաթիվ խոչընդոտների և սպառնալիքների կապակցությամբ:

Լրատվամիջոցների վերաբերյալ քարոզարշավի կանոնակարգերը մասամբ սահմանվում են Հանրաքվեի մասին օրենքով և հղում են կատարում Ընտրական օրենսգրքին: Քանի որ Ընտրական օրենսգրքի ընդհանուր լրատվամիջոցների մասին դրույթները կենտրոնացած են ընտրության մասնակիցների ընտրարշավների լուսաբանման վրա, ապա ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի լրագրող գրուցակիցների շրջանում առկա է ըմբռնման պակաս, թե ո՞ր դրույթներն են հատկապես կիրառվում հանրաքվեի պարագայում, մասնավորապես, լրատվամիջոցներին ներկայացվող այն պահանջների դեպքում, ըստ որի լուրերի հաղորդման ժամանակ լրատվամիջոցները պետք է ապահովեն անկողմնակալ լուսաբանում և քարոզարշավի ընթացքում նրանց պետք է երաշխավորվի ոչ խտրական պայմաններ:

Ընտրական օրենսգրքը պետք է փոփոխվի՝ լրատվամիջոցներին տրամադրելու ընդհանուր ուղենիշներ քարոզչության լուսաբանման առումով, հաշվի առնելով մասնագիտական չափանիշները, արդար լուսաբանումը, անկողմնակալությունը և հավասարակշիռ մոտեցումը, պետք է ընդհանուր պահանջները լրացնել ավելի մանրամասնված պահանջներով, որը պետք է լինի կիրառելի լինի բոլոր տեսակի

²⁷ Տես՝ Մամուլի ազատության ԵԱՀԿ-ի ներկայացուցչի հայտարարությունը <http://www.osce.org/fom/124611>, <http://www.osce.org/fom/166106>, և <http://www.osce.org/fom/173311>

ընտրությունների և հանրաքվեների համար: Նման դրույթները, սակայն, չպետք է սահմանափակեն և ոչ էլ կանխեն քարոզչության անկախ խմբագրական լուսաբանումը:

Վճարովի և անվճար եթերաժամանակը հասանելի է եղել միայն ներկա խորհրդարանական քաղաքական խմբակցություններին: Օրենքով հաստատված չէ անվճար հատկացվող կամ վճարովի գովազդներին վերապահված եթերաժամանակի նվազագույն չափը, այլ ներկայացված է միայն առավելագույն չափը: Յուրաքանչյուր խորհրդարանական խմբակցություն իրավունք ուներ ստանալու մինչև 60 րոպե եթերաժամ շաբաթը և մինչև 120 րոպե՝ Արմադիո-ում: Շաբաթը և Արմադիոն ունենին իրավական պարտավորություն՝ յուրաքանչյուր օր տրամադրելու ժամանակի մի փոքր մաս, և, բոլոր կուսակցությունները, բացառությամբ մեկի, օգտվեցին այդ հնարավորությունից²⁸: Ժամանակացույցը և մասնակցության հերթականությունը որոշվել է ԿԸՀ-ի կողմից հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած վիճակահանությամբ: Թե շաբաթը և Արմադիոն, հեռարձակել են անվճար և վճարովի նյութերը խոշոր բովանդակով, ոչ ամենադիտվող ժամերին, այդպիսով պոտենցիալ կերպով սահմանափակելով իրենց լսարանը:²⁹

Ցանկացած հեռարձակող լրատվամիջոց, որը որոշել է վաճառել եթերաժամը խորհրդարանական քաղաքական կուսակցությանը, պարտավոր է հրապարակել գները հանրաքվեի անցկացման մասին հրապարակումից հետո՝ 10 օրվա ընթացքում:³⁰ *Ըստ օրենքի, մի կուսակցություն կարող է ձեռք բերել մինչև 120 և 180 րոպե եթերաժամանակ համապատասխանաբար հեռուստատեսությամբ և ռադիոկայանով: ՀՌԱՀ-ը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին, որ ժամանակի ճնշող մեծամասնությունը գնվել է ՀՀԿ-ի կողմից:*

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի գրուցակիցները նշեցին, որ, չնայած որ քարոզարշավը տեսանելի էր մամուլում, կար սահմանափակ տեղեկատվություն առաջարկվող սահմանադրական փոփոխությունների բովանդակության շուրջ, բացառությամբ կիսանախագահականից խորհրդարանական հանրապետության անցումը: Քարոզարշավի լուսաբանումը հիմնականում կենտրոնացած էր հանրաքվեի կողմնակիցների և հակառակորդների հայտարարությունների ու գործունեության վրա, բայց քիչ էր քննարկում փոփոխությունների էությունը: Սա հնարավորինս սահմանափակում էր ընտրողների հնարավորությունը՝ կատարել տեղեկացված ընտրություն: Մի շարք պետական պաշտոնյաներ և սահմանադրական փոփոխությունների կողմնակիցներ, որպես այս քարոզարշավի առանձնահատկություն, նշել էին նոյեմբերի 13-ից մինչև քարոզարշավի ավարտը Արմնյուզ մասնավոր հեռուստաընկերությամբ հեռարձակվող ամենօրյա ռեալիթի շոուն, որը հետևում էր քարոզչության մի շարք ընտրված ներկայացուցիչներին, որոնք աջակցում կամ ընդդիմանում էին սահմանադրական փոփոխություններին: Սակայն, շոուն չի հաջողվել ներգրավել զգալի լսարան, որի պատճառը, հնարավոր է, ընտրված ձևաչափն էր:³¹

²⁸ ԻԳ-ը որոշեց չօգտագործել Հանրային Ռադիոյի կողմից տրամադրվող անվճար եթերաժամանակը:

²⁹ Անվճար և վճարովի նյութերը հեռարձակվել են ամենադիտվող ժամերին՝ սկսած ժամը 18:00-ից շաբաթը և 13:00-ից մինչև 21:40 - ը Արմադիոնում:

³⁰ Ըստ ՀՌԱՀ-ի, 24 հեռուստա- և 6 ռադիոկայաններ հրապարակել են գները քաղաքական գովազդատուների համար:

³¹ Յուրաքանչյուր ծրագիր տևում էր օրական 9-ից 12 ժամ: Ըստ Telemediacontroll գրասենյակի կողմից իրականացվող (գերմանական GFK -ի տեղական գործընկեր) վարկանիշային չափումների, նոյեմբերի 13-ից մինչև 23-ը ընկած ժամանակահատվածում <<Այո և Ոչ>> ծրագիրը

Դեկտեմբերին 3-ին, վեց հիմնական հեռուստաալիքներ (Հ 1, Արմենիա, Կենտրոն, Հ2, Շանթ և Երկիր Մեդիա) հեռարձակել են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը՝ սատարելով սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը: Այս հարցազրույցը ներկայացվել է, ինչպես լուրերի հեռարձակման ժամանակ՝ 2 րոպե տևողությամբ Երկիր Մեդիա հեռուստաալիքով, մինչև 26 րոպե տևողությամբ՝ Հ1-ով, այնպես էլ որպես առանձին ծրագիր՝ չորս հեռուստաալիքներով (Արմենիա, Հ 2, Կենտրոն և Երկիր Մեդիա) ամենադիտվող եթերաժամին՝ 51-ից մինչև 80 րոպե տևողությամբ: Այս լուսաբանումը չէր բխում լրատվամիջոցների կողմից՝ նախագահի գործունեությունը ներկայացնելու անհրաժեշտությունից և տրամադրվել է անվճար՝ ընձեռնելով անհարկի առավելություն սահմանադրական փոփոխությունների կողմնակիցներին:

Սկսած նոյեմբերի 6-ից, Հ1 հեռուստաալիքը հեռարձակել է միակ շաբաթական ընթացիկ հարցերը լուսաբանող թոք-շոու («Եռանկյունի»)՝ երկուսը հինգ հեռարձակվող ծրագրերից, որոնք հեռարձակվել են հանրաքվեի քարոզչական ժամանակահատվածում նվիրված հանրաքվեին: Ծրագիրը վարել է կրթության նախարար Արմեն Աշոտյանը, ով ՀՀԿ փոխնախագահն է և «Այո» շտաբի անդամ:³² Նման պրակտիկան, թեև արգելված չէ օրենքով, ստեղծել շահերի բախման ընկալում և կասկածի տակ է դրել հանրային հեռուստաալիքի անկողմնակալությունը: ՀՌԱՀ-ը, սեփական նախաձեռնությամբ, գնահատել է «Եռանկյունի» թոք-շոուն և չի գտնել կանխակալ լուսաբանման կամ մասնակիցներին անհավասար մոտեցման որևէ նախապայման: Ինչ վերաբերում է շոուի վարողի հանրային և կուսակցական դիրքին, ապա ՀՌԱՀ-ը տեղեկացրել է, որ պաշտոնյաները իրավունք ունեն ներգրավված լինել ստեղծագործական գործունեության մեջ իրենց աշխատանքային ժամից դուրս, և, որ շոու վարելը ստեղծագործական գործունեությունն է ու չի խախտում որևէ օրենք:

Ընտրական և հանրաքվեների քարոզարշավների ընթացքում ՀՌԱՀ-ը պարտավոր է վերահսկել լրատվամիջոցները՝ մասնակիցներին հավասար պայմանների ապահովման համար, ինչպես նաև ՀՌԱՀ-ը տեղեկացրել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին, որ չի իրականացվել լրատվամիջոցների շարունակական մոնիտորինգ ռեսուրսների բացակայության պատճառով, դրա փոխարեն ՀՌԱՀ-ը պարտավորեցրել է լրատվամիջոցներին տրամադրել իրեն վիճակագրություն՝ սահմանադրական փոփոխությունների կողմնակիցների և հակառակորդների լուսաբանման վերաբերյալ՝ կատարելով միայն ներկայացված տվյալների պատահական ստուգումներ: Լրատվամիջոցների մոնիտորինգի հրապարակված արդյունքները իրենց ուշադրության կենտրոնում էին պահել սահմանադրական փոփոխությունների կողմնակիցներին և հակառակորդներին տրամադրված ժամանակաքանակը, առանց մասնակցող խմբերի ըստ որևէ հետագա տարանջատման տվյալների կամ լուսաբանման բնույթի:

Չնայած Ընտրական օրենսգիրքը պահանջում է ՀՌԱՀ-ին ներկայացնել միջանկյալ մոնիտորինգի հաշվետվությունները ոչ ուշ, քան քարոզարշավի տասներորդ և քսաներորդ

ուներ միջին հանրապետական վարկանիշի 0.168 տոկոսը և լսարանի միջին մասնաբաժնի 1.335 տոկոսը:

³² Հ1 -ի ներկայացուցիչը տեղեկացրել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ին, որ հանրային հեռարձակողի համար տարբերություն չկա, թե ով է թոք շոուն վարում՝ քաղաքական գործիչը, պետական պաշտոնյան կամ քաղաքացին, քանի որ բոլորն էլ ինչ որ չափով կողմնակալ են:

օրը, պաշտոնական քարոզարշավի համեմատաբար երկար տևողությունը հանգեցրել է նրան, որ զեկույցները հրապարակվել են քարոզարշավի սկզբում, մինչդեռ քարոզչության զգալի մասը, այդ թվում ազատ եթերաժամի բաշխումը և վճարովի գովազդները (սկսած 28 հոկտեմբերից), լուսաբանվել են միայն քվեարկության օրվանից հետո հրապարակած զեկույցում: ՀՌԱՀ-ը ստացել է հանրաքվեին առնչվող մեկ բողոք՝ ներկայացված ՀԱԿ-ի կողմից, մամուլում հավասարակշռված լուսաբանման բացակայության վերաբերյալ: Ըստ ՀՌԱՀ-ի, բողոքը մերժվել է, քանի որ այն ներկայացվել է քարոզչության հենց սկզբում, երբ լուսաբանման որևէ միտում դեռ չէր որոշվել:

Պետք է բարձրացնել ՀՌԱՀ-ի վերահսկողական դերը քարոզարշավի ժամանակ և դրանից դուրս ընկած ժամանակահատվածում: ՀՌԱՀ-ը կարող է հրապարակել քարոզարշավի լուսաբանման մանրամասն ուղենիշներ և լրատվամիջոցների մոնիթորինգի մեթոդաբանություն, որը կներառի լուսաբանման տոնի/բնույթի/ գնահատումը: Լրատվամիջոցների ներկայացրած տվյալների վրա հիմնվելու փոխարեն ՀՌԱՀ-ը ինքնուրույն կերպով պետք է իրականացնի լրատվամիջոցների ամբողջական շարունակական և հետևողական մոնիթորինգ: Լրատվամիջոցների մոնիթորինգի զեկույցները պետք է հրապարակվեն կանոնավոր կերպով քարոզարշավի ողջ ընթացքում, անկախ վերջինիս տևողությունից:

VII. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն հանձնարարականները, ինչպես նաև տեքստում նշվածները, առաջարկվում են նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանում հանրաքվեների եւ ընտրությունների անցկացումը և աջակցելու, որպեսզի դրանք լիովին համահունչ լինեն ԵԱՀԿ պարտավորություններին և այլ միջազգային պարտավորություններին և չափանիշներին: Սույն հանձնարարականները պետք է ընթերցել ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում կատարված հանձնարարականների հետ համատեղ: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ն պատրաստ է աջակցել Հայաստանի իշխանություններին հանրաքվեների եւ ընտրական գործընթացների հետագա բարելավմանը և անդրադառնալ այս եւ նախորդ զեկույցներում կատարված հանձնարարականներին:³³

Ա. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Ընտրական օրենսդրության փոփոխությունները պետք է իրականացվեն ներառական կերպով, և բոլոր շահագրգիռ կողմերը պետք է խրախուսվեն գործադրել բոլոր հնարավոր ողջամիտ ջանքերը՝ գալու հնարավորինս ամբողջական փոխհամաձայնության բարեփոխումների վերաբերյալ, հաշվի առնելով ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի բոլոր նախորդ համապատասխան հանձնարարականները: Հանրաքվեների կանոնակարգումները պետք է համապատասխանեցվեն ժողովրդավարական ընտրական գործընթացների միջազգային չափանիշներին և պետք է հաշվի առնվեն Ընտրական օրենսգրքում:

³³ 1999 թվականի ԵԱՀԿ ստամբուլյան փաստաթղթի Կետ 25-ում, ԵԱՀԿ մասնակից պետությունները պարտավորվել են «ժամանակին հետևել ԺՀՄԻԳ գնահատականներին և հանձնարարականներին»:

2. Ավելի արդյունավետ քննություն երաշխավորելու համար բողոքների և դիմումների իրավական շրջանակները պետք է վերանայվեն: Մասնավորապես, ընտրական գործընթացի վերաբերյալ բողոքներ ներկայացնելու իրավական կարգին պետք է տալ ավելի լայն երաշխիքներ: Ընտրությունների և հանրաքվեի արդյունքները վերանայելու պահանջների ներկայացման ժամկետները պետք է թույլ տան դիմողներին պատրաստել դիմումները և ապահովել ժամանակին արված քննություն:
3. Դատախազությունները և այլ իրավապահ մարմինները, ինչպես նաև ԿԸՀ-ն պետք է ակտիվորեն և թափանցիկ հետամուտ լինեն, որ հանրաքվեի ընթացքում տեղ գտած ընտրախախտումներին առնչվող գործերը, հետաքննվեն ժամանակին և անհրաժեշտության դեպքում նախաձեռնեն և հարուցեն քրեական կամ վարչական վարույթ ընդդեմ ենթադրյալ օրինազանցների: Դատախազությունները, ոստիկանությունը և ԿԸՀ-ն պետք է անհապաղ արձագանքեն ընտրախախտումների բոլոր փուլերի ընթացքում ստացված հաղորդումներին՝ բացահայտելու և կանխարգելելու ընտրական գործընթացի հնարավոր չարաշահումները:
4. Ինչպես նշված է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ նախորդ հանձնարարականներում, համապատասխան մարմինները պետք է բարելավեն ընտրողների ռեգիստրի ճշգրտությունը և ձգտեն հասնել փոխհամաձայնության արդյունավետ լուծումների վերաբերյալ՝ անդրադառնալով հարատևող այն ընկալմանը, որ ընտրողների ցուցակներում Հայաստանից բացակայող քաղաքացիների ընդգրկվածությունը կարող է շահարկվել՝ հեշտացնելով բացակայող անձի փոխարեն քվեարկելը կամ այլ ընտրախախտումներ:
5. Համապատասխան մարմինները պետք է ներկայացնեն արդյունավետ և հետևողական երաշխիքներ բազմակի քվեարկության դեմ, որը կկիրառվի բոլոր ընտրողների նկատմամբ՝ անկախ նույնականացման նպատակով ընտրողի կողմից օգտագործվող փաստաթղթի տեսակից:

Բ. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

6. Իշխանությունները պետք է նկատի ունենան տարբերակներ ընտրատեղամասերի հասանելիության բարելավման համար և ապահովեն լրացուցիչ մեխանիզմներ, որոնք թույլ կտան սահմանափակ տեղաշարժման հնարավորություն ունեցող անձանց իրականացնել քվեարկելու իրենց իրավունքը, որը հետագայում էլ կնպաստի համընդհանուր ընտրական իրավունքի իրագործմանը:
7. Քաղաքական կուսակցությունների վստահված անձինք չպետք է որևէ կերպ կաշկանդված լինեն իրականացնել օրենքով նախատեսված բոլոր գործառնությունները, բայց նրանք չպետք է գործադրեն ճնշում կամ միջամտեն քվեարկության օրվա գործողություններին: Քաղաքական կուսակցությունները պետք է ապահովեն իրենց դիտորդների համար համապատասխան ուղորդում և ուսուցում և կրեն իրավական և քաղաքական պատասխանատվություն՝ իրենց վստահված անձանց վարքագծի համար:

8. Ինչպես ավելի վաղ առաջարկվել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից, ԿԸՀ-ի կողմից դիտորդների թեստավորումը չպետք է լինի պարտադիր կամ լինել նախապայման քաղաքացի դիտորդների հավատարմագրման համար:
9. Ընտրությունների և հանրաքվեների իրավական շրջանակները պետք է կարգավորեն քարոզչության համար հանրային միջոցների օգտագործումը՝ հավասար հնարավորություն և ազատություն ապահովելով ընտրողներին կարծիք ձևավորելու համար: Հանրաքվեի մասին օրենքում պետք է կատարել փոփոխություններ՝ պարտադրելով ավելի խիստ սահմանափակումներ՝ պետական պաշտոնյաների կողմից քարոզչություն գործունեությամբ զբաղվելու առնչությամբ:
10. Հանրաքվեների թափանցիկությունը բարելավելու համար պետք է փոփոխել քարոզարշավի ֆինանսավորման կանոնակարգերը՝ տրամադրել մանրամասն ֆինանսական հաշվետվություններ հանրաքվեի միջոցների վերաբերյալ և հիմնադրամի ԿԸՀ-ի աուդիտի արդյունքները դարձնել հանրորեն մատչելի և դրանք տեղադրել ԿԸՀ-ի կայքում:
11. Միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի ապահովվի լրատվամիջոցների սեփականության լիարժեք թափանցիկությունը՝ պահանջելով և հնարավորություն տալով ՀՌԱՀ-ին հստակորեն նշել լրատվամիջոցների վերջնական և շահառու սեփականատերերին: Պետք է կիրառել լրացուցիչ վերահսկում և պատժամիջոցներ, որպեսզի լրատվամիջոցները իրավասու մարմիններին տրամադրեն սեփականության և ֆինանսավորման վերաբերյալ համապարփակ և ժամանակին արված տեղեկատվություն: Լրատվամիջոցների սեփականության և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հանրությանը:
12. Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ լրատվամիջոցներին տրամադրելու ընդհանուր ուղենիշներ քարոզչության լուսաբանման առումով, հաշվի առնելով մասնագիտական չափանիշները, արդար լուսաբանումը, անկողմնակալությունը և հավասարակշիռ մոտեցումը, պետք է ընդհանուր պահանջները լրացնել ավելի մանրամասնված պահանջներով, որը պետք է լինի կիրառելի լինի բոլոր տեսակի ընտրությունների և հանրաքվեների համար: Նման դրույթները, սակայն, չպետք է սահմանափակեն և ոչ էլ կանխեն քարոզչության անկախ խմբագրական լուսաբանումը:
13. Պետք է բարձրացնել ՀՌԱՀ-ի վերահսկողական դերը քարոզարշավի ժամանակ և դրանից դուրս ընկած ժամանակահատվածում: ՀՌԱՀ-ը կարող է հրապարակել քարոզարշավի լուսաբանման մանրամասն ուղենիշներ և լրատվամիջոցների մոնիթորինգի մեթոդաբանություն, որը կներառի լուսաբանման տոնի/բնույթի/ գնահատումը: Լրատվամիջոցների ներկայացրած տվյալների վրա հիմնվելու փոխարեն ՀՌԱՀ-ը ինքնուրույն կերպով պետք է իրականացնի լրատվամիջոցների ամբողջական շարունակական և հետևողական մոնիտորինգ: Լրատվամիջոցների մոնիտորինգի զեկույցները պետք է հրապարակվեն կանոնավոր կերպով քարոզարշավի ողջ ընթացքում, անկախ վերջինիս տևողությունից:

VIII. ՀԱՎԵԼՎԱԾ. ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԿԸՀ-ի արդյունքների արձանագրության տվյալներ	Ընդհանուր թիվը
Բոլոր ընտրական ցուցակներում ընտրողների ընդհանուր թիվը	2,566,998
Քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը	1,302,613
Ներառյալ ID նույնականացման քարտերով ընտրողների թիվը	189,197
«Այո» քվեների ընդհանուր քանակը	825,521
«Ոչ» քվեների ընդհանուր քանակը	421,568
Անվավեր քվեների թիվը	53,435

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՄԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է, որը կոչված է աջակցել անդամ երկրներին «ապահովել մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական հարգումը, հաստատել օրենքի գերակայություն, զարգացնել ժողովրդավարական սկզբունքները և (...) կառուցել, ամրապնդել և պահպանել ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև բարձրացնել հասարակությունում հանդուրժողականությունը» (1992թ. Հելսինկյան համաժողովի փաստաթուղթ): Սա կոչվում է ԵԱՀԿ մարդու իրավունքներ:

Վարչապետ (Լեհաստան) հիմնադրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990թ. Փարիզյան համաժողովում, որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991թ. մայիսից: Մեկ տարի անց, գրասենյակի անունը փոխվում է՝ մարդու իրավունքների և ժողովրդավարացման ընդլայնված լիազորություններն արտահայտելու նպատակով: Այսօր այն ունի ավելի քան 130 աշխատակից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում **ընտրությունների դիտարկման** ոլորտում առաջատար կազմակերպություն է: Ամեն տարի այն ղեկավարում և կազմակերպում է հազարավոր դիտորդների տեղակայում՝ գնահատելու համար, թե արդյոք ԵԱՀԿ տարածքում ընտրությունները իրականացվել են ԵԱՀԿ պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների համար միջազգային այլ չափանիշներին և ազգային օրենսդրությանը համապատասխան: Նրա եզակի մեթոդոլոգիան հնարավորություն է ընձեռում խորությամբ ուսումնասիրել ընտրական գործընթացներն իրենց ամբողջականությամբ: Աջակցության ծրագրերի միջոցով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը օգնում է անդամ երկրներին բարեփոխել իրենց ընտրական համակարգը:

Գրասենյակի **ժողովրդավարացման** միջոցառումներն ընդգրկում են՝ օրենքի գերակայություն, իրավական աջակցություն, ժողովրդավարական կառավարում, միգրացիա ու տեղաշարժման ազատություն և գենդերային հավասարություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը տարեկան իրականացնում է մի շարք նպատակային աջակցության ծրագրեր՝ ցանկանալով զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը աջակցում է նաև անդամ երկրներին կատարել իրենց պարտավորությունները՝ զարգացնելու և պաշտպանելու **մարդու իրավունքները** և հիմնարար ազատությունները՝ ԵԱՀԿ մարդու իրավունքների պարտավորություններին համապատասխան: Դա նվաճվում է տարբեր գործընկերների հետ աշխատանքով՝ համագործակցությունը ուժեղացնելու, հնարավորություններ ստեղծելու համար և թեմատիկ ոլորտներում փորձաքննություն տրամադրելով, ներառյալ ահաբեկչության դեմ պայքարում մարդու իրավունքները, թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքների պաշտպանության ընդլայնումը, մարդու իրավունքների ուսուցումը և վերապատրաստումը, մարդու իրավունքների դիտարկումը ու զեկուցումը և կանանց իրավունքները և պաշտպանությունը:

Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտներում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը անդամ երկրներին տրամադրում է աջակցություն՝ ուժեղացնելու աստեղծության հիման վրա

հանցագործությունների և ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմինիստականության և անհանդուրժողականության այլ դեպքերի դեմ պայքարը: Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գործողությունները կենտրոնացած են հետևյալի վրա՝ օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, դիտարկում, զեկուցում և ատելության հիման վրա հանցագործություններ և դեպքերի դեմ քայլերի հետևողականություն, ինչպես նաև հանդուրժողականությունը, հարգանքը և փոխըմբռնումը բարձրացնող կրթական միջոցառումներ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն անդամ Երկրներին խորհրդատվություն է տրամադրում իրենց «**Roma and Sinti**» վերաբերյալ քաղաքականությունում: Այն աջակցում է «Roma and Sinti» համայնքների միջև կարողությունների կառուցմանը և համագործակցությանը, և խրախուսում է «Roma and Sinti» ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականություն մշակող մարմիններում:

ԺՀՄԻԳ բոլոր միջոցառումներն իրականացվում են ԵԱՀԿ անդամ Երկրների սերտ համաձայնեցման և համագործակցության, ԵԱՀԿ կառույցների և ոլորտային աջխատանքների միջոցով, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների հետ: Ավել տեղեկատվություն հասանելի է ԺՀՄԻԳ կայքում (www.osce.org/odihp)